ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
2022 թ.
№ 13 (1092)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Հոկտեմբերի 5-ը Հայաստանում նշվում է որպես Ուսուցչի օր

«Մանուկների աշխարհը վաղուց ի վեր բոլոր երկրային, հոգեպարար բախտավորություններից ինձ համար ամենաբարձրն է եղել: Նրանց կրթելը աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար ու դեռ ավելին»:

Խաչատուր ԱԲՈՎՅԱՆ

Մեր ժողովուրդը զարմանալի իմաստուն կենսակերպ ունի. բոլոր ժամանակներում, դարեր ի վեր, կարողացել է դիմակայել մարտահրավերներին՝ իր դպրությամբ, գրով, մշակույթով:

Կրթությունը հայ մարդու ապրելու կերպն է, նրա արարող մտքի ու հոգևոր իմաստնության հարատև ընթացքը:

Սիրելի՛ Ուսուցիչներ, շնորհավորում ենք բոլորիդ Ուսուցչի օրվա առթիվ: Վստահ ենք, որ ժամանակի հետ կարժևորվեն Ձեր կերպարն ու այն արժեքները, որոնց կրողն եք:

Դուք ընտրել եք աշխարհի ամենալավ մասնագիտությունը: Ձեր առաքելությանը ուժ ու կորով ենք մաղթում, ստեղծագործաբար ուսուցանելու և արարելու մեծ կամք:

Սիլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՄԵՐ ՍԵՐԸ

Հայաստա՛ն աշխարհ,
Դու մե՛ր եղար ու մերը չեղա՜ր,
Դրա համար էլ մենք քեզ սիրեցինք սիրահարի՝ պես ...
Դու մե՛ր եղար,
Ինչպես որ մերն է մեր երակներում հոսող արյունը,
Եվ մերը չեղար,
Ինչպես մերը չէ Վարագա սարի արևածագը,
Սասնա անտառին իջնող մանանան,
Մշո դաշտերը շոյող սոսափը...
Դու մոտի՛կ եղար՝
Սրտիդ տրոփը մեր կոշտ չեռքերին հաղորդելո՜ւ չափ,
Եվ հեռու եղար՝
Սահմանից այն կողմ
Ամնի կարմիր ա՜վերակներից մեզ երևացող
Մայր տաճա՜ր՝ պես:
Դու տաք հող եղար՝
Մեր պիրկ խոփերի տենչանքին հլու,
Մեր գգվանքներից ծլարչակող հող,
Եվ միրաժ եղար
Կապույտ, անշոշափ ու անբռնելի,
Մենք՝ անվերջ հասնո՛ղ,
Իսկ դու՝ հեռացո՛ղ, անվերջ հեռացո՜ղ...
Հայաստա՛ն աշխարհ,
Դու այդպե՛ս եղար,
Եվ դրա համար մենք քեզ սիրեցինք
Ո՛չ հարազատի հանդարտիկ սիրով,
Այլ՝ սիրածի՛ պես, սիրահարի՛ պես.
Ցավո՛տ, ցավախառն
Երազով, լույսով, երգող տխրությամբ,
Մերթ խռովելով,
Մերթ հաշտվելով,
Քո գրկո՛ւմ անգամ՝ քեզ կարոտելո՛վ,
Քեզ կորցնելու ահից՝ տագնապա՛ծ,
Քեզ ունենալու խինդից՝ երջանի՜կ,
Եվ բախտիդ համար անվերջ,
ամեն պահ մեռնել-ապրելո՜վ...
Հայաստա՜ն աշխարհ...

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հնագույն ֆակուլտետներից մեկն է, կազմավորվել է 1938 թ.-ին, ապա վերաբացվել 1945 թ.-ին և կոչվել է Կենսաբանաքիմիական ֆակուլտետ:

1951 թ.-ին Կենսաբանաքիմիական ֆակուլտետին է միացել աշխարհագրության բաժին, և ֆակուլտետը վերանվանվել է Բնագիտաաշխարհագրական:

1966-67 ուստարում Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետից առանձնանում է աշխարհագրության բաժինը և միանում Պատմության ֆակուլտետին: 2008-2009 ուսումնական տարում աշխարհագրության բաժինը նորից միանում է Կենսաքիմիայի ֆակուլտետին, և ձևավորվում է մինչ այսօր գործող Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը:

Ներկայումս Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը ղեկավարում է կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուզաննա Սադոյանը:

Ֆակուլտետի կազմում գործում են երկու՝ Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի (անբիոնի վարիչ՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Պիպոյան) և Աշխարհագրության և նրա դասա- ➢3

ԼՐԱՀՈՍ

Առցանց քննարկում



Սեպտեմբերի 22-ին ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը մասնակցեց Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի հանրային խորհրդի՝ ԱՊՀ երկրներում մանկավարժական կադրերի պատրաստման բազային կազմակերպության նիստին:

Համալսարանի ռեկտորն առցանց նիստի անդամներին ներկայացրեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյա ընթացքի սկզբնավորումն ու կարևոր իրադարձությունները, բուհի հիմնադիրներին, ականավոր գիտնականներին ու մշակույթի գործիչներին, որոնք կերտել են բուհի տարեգրությունը:

Սրբուհի Գևորգյանի ելույթն ուներ ընդգծված շեշտադրումներ, որի հիմքում մանկավարժական բուհերում, մասնավորապես ՀՊՄՀ-ում ժամանակակից մանկավարժի և որակյալ կադրերի պատրաստման գործընթացի կարևորումն էր, մանկավարժական մասնագիտության ներքո ուսուցանվող կադրերի հոգեկերտվածքի ու մտավոր ունակությունների ձևավորման ու զարգացման հարցերը:

Համալսարանի ղեկավարը կարևորեց Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի հետ համագործակցությունը՝ հենված կրթական համատեղ ձեռնարկների վրա: Ս. Գևորգյանը մասնավորապես անդրադարձավ մի շարք միջոցառումների, որոնք իրականացվում են գործընկեր բուհերի հետ՝ դասախոսների և ուսանողների անմիջական մասնակցությամբ: Այդ համատեքստում նա առանձնացրեց «Ամառային դպրոց» ծրագիրը, «Ոսկե դասախոսությունների» շարքը, վարպետության դասերը, տարբեր սեմինարներ ու հանդիպումներ:

Օրակարգում լսեցին նաև Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ալեքսեյ Լուբկովին, որը ներկայացրեց իրենց՝ այս տարի 150-ամյակը բոլորած բուհը:

Ներկաները լսեցին նաև այլ զեկուցումներ: Համալսարանի Տեսական և հատուկ սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ Սերգեյ Իվանովն անդրադարձավ «ԱՊՀ մանկավարժական բուհերում կրթության որակի մոնիթորինգ» թեմայով առաջատար մանկավարժական բուհերի խմբային հետազոտության շրջանակներում կատարված աշխատանքներին:

Նիստի ավարտին ամփոփիչ ելույթով հանդես եկավ Մանկավարժական համալսարանների եվրասիական ասոցիացիայի գործադիր տնօրեն Էդուարդ Նիկիտինը՝ ներկայացնելով երիտասարդ դասախոսների «Մանկավարժական սկիզբ-2022» 4-րդ միջազգային մրցույթի կազմակերպման մանրամասները:

Դասախոսի և ուսանողի կողքին

Ցանկացած կառույցի ղեկավարի համար կարևոր է հաջողությամբ իրականացնել համակարգված, թիմային աշխատանքը և պահպանել ճիշտ հարաբերություններ. տարիներ շարունակ այդպես է աշխատում Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուզաննա Սադոյանը:

Նա դեռ դպրոցական տարիներից անսահման սիրել է բնությունը և հետաքրքրվել մանկավարժությամբ: Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը հնարավորություն տվեց համատեղել երկու սիրելի մասնագիտությունները: 1991 թվականին գերազանցությամբ ավարտել է կենսաբանության բաժինը և դարձել հայկական գյուղատնտեսական ակադեմիայի հայցորդ:

Բուհն ավարտելուց հետո Պ. Պռոշյանի անվան № 15 դպրոցում դասավանդել է կենսաբանություն. ուսուցչական տարիները Ռուզաննա Սադոյանը համարում է իր կյանքի ամենահագեցած ժամանակահատվածը:

2009 թվականին վերադարձել է հարազատ ֆակուլտետ՝ արդեն որպես դասախոս: Դասավանդմանը զուգընթաց առ այսօր նա զբաղվում է գիտությամբ. «Ակադեմիական գիտելիքների հարստացումը հնարավորություն է տալիս առաջ շարժվել մասնագիտական բնագավառում և օգնում է շատ հարցերում, հատկապես մանկավարժի կյանքում գիտելիքների հարստացումը պետք է լինի ամենօրյա գործընթաց»,- ասում է Ռ. Սադոյանը, ով արդեն մի շարք գիտական հոդվածների և ուսումնամեթոդական ձեռնարկների հեղինակ է:

Դասախոսական գործունեության մասին խոսելիս հավելում է. «Հաճելի և պարտավորեցնող էր այն պահը, երբ տարիների դադարից հետո վերադարձա հարազատ ֆակուլտետ. իմ դասախոսներն արդեն գործընկերներ էին, և նրանց հետ ունեցած մասնագիտական քննարկումները, երբեմն էլ փոքրիկ բանավեճերն օգնեցին ինձ մասնագիտական զարգացման հարցում»:

Ֆակուլտետը համարելով իր կյանքի կարևորագույն մասը՝ դեկան Ռուզաննա Սադոյանն իր ամենօրյա աշխատանքով փորձում է լինել ուսանողների կողքին, հնարավորինս օգնել, աջակցել և փոխանցել իր գիտելիքներն ու փորձը, մոր պես ուրախանում է յուրաքանչյուրի հաջողությամբ և օգնում ուժերի ներածին չափով: Չհանդուրժելով ծուլությունը և սուտը, ինչպես նաև առաջնորդվելով «Գիտելիքների հարստացում և աշխատանք» կարգախոսով՝ Ռուզաննա Սադոյանը շարունակում է իր աշխատանքային ճանապարհը հարազատ ֆակուլտետում, որի զարգացման համար իր թիմի հետ դեռ շատ ծրագրեր ունի իրագործելու: Իսկ կատարած աշխատանքների մասին նախընտրում է չխոսել՝ թողնելով դա ժամանակին, բուհի ղեկավարությանը, գործընկերներին և ուսանողությանը:

Զրույցը՝ Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆԻ

Գիտահետազոտական աշխատանք

Ֆակուլտետում բացվել և վերազինվել են կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության գիտաուսումնական, ինչպես նաև կենսաբանական ակտիվ միացությունների ուսումնասիրման և կենսաանվտանգության, էկոլոգիական մոնիթորինգի և գնահատման գիտական լաբորատորիաներ: Մագիստրոսի կրթական ծրագրի շրջանակում 2017-18 ուստարում բացվել և հաջողությամբ գործում է «Լանդշաֆտային պլանավորում» մասնագիտությունը, որը տվյալ բնագավառի մասնագետների պատրաստման առումով միակն է հանրապետությունում:

Ֆակուլտետը գիտահետազոտական փորձի փոխանակման, հետազոտական պրատիկաների անցկացման, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պատրաստման շրջանակներում համագործակցում է հանրապետության մյուս բուհերի և ԳԱԱ համապատասխան կառույցների՝ գիտահետազոտական ինստիտուտների, միջազգային գիտական հաստատությունների հետ:

Ֆակուլտետը մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի լեռնային երկրների կայուն զարգացում և ռեսուրսների արդյունավետ կառավարում, լանդշաֆտային պլանավորում, կլիմայի գլոբալ փոփոխության, անապատացման, կենսաբազմազանության պահպանության, Կովկասյան տարածաշրջանում կայուն զբոսաշրջության զարգացման, սահմանային հատուկ պահպանվող տարածքների կառավարման, ՌԴ հարավի և Հայաստանի չորային ագրոկլիմայական գոտիներում մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի կայունությունը բարձրացնող պրեպարատների ստեղծում և այլն :

Վերջին տաս տարիների ընթացքում պաշտպանվել է երկու դոկտորական ատենախոսություն, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ղեկավարությամբ թեկնածուական թեզեր են պաշտպանել 9 ասպիրանտներ և հայցորդներ, այժմ թեկնածուական թեզերի վրա են աշխատում 6 հայցորդ և 3 ասպիրանտ:

Ֆակուլտետի մշտական ուշադրության կենտրոնում են ազգային դպրոցն ու որակյալ ուսուցիչների պատրաստումը, որի վառ ապացույցն է աշակերտների և ուսուցիչների պարբերաբար այցելությունները համալսարան և միջազգային ծրագրերին ուսանողների մասնակցությունը:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը մասնակցում է բուհական և դպրոցական առարկայական պլանների, չափորոշիչների և առարկայական ծրագրերի բարեփոխման գործընթացին: Հրատարակվել և խմբագրվել են բազմաթիվ բուհական և դպրոցական դասագրքեր, ուսումնական ու մեթոդական ձեռնարկներ, մենագրություններ:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետն ունի արտասահմանյան առաջատար մի շարք գիտահետազոտական և գիտակրթական հաստատությունների հետ համագործակցության փորձ:

Յուրի Երզնկյանի 100-ամյակին նվիրված նամականիշ

Սեպտեմբերի 2-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում հայ ականավոր ռեժիսոր, սցենարիստ, պրոֆեսոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ և պետական մրցանակի դափնեկիր Յուրի Երզնկյանի 100-ամյակի առթիվ նամականիշ թողարկվեց: 320 դրամական արժեքով նամականիշի աջ հատվածում պատկերված է ռեժիսորը: Նամականիշի ձախ հատվածում պատկերված են դրվագներ 1958 թվականին նկարահանված «Առաջին սիրո երգը» հայկական գեղարվեստական ֆիլմից:

Նամականիշի ներքևի հատվածում պատկերված է «Յուրի Երզնկյան 1922-1996 թթ.» գրառումը հայերեն և անգլերեն:

Նամականիշը տպագրվել է Ֆրանսիայում՝ 15 հազար տպաքանակով:

Նամականիշի մարումն իրականացրին Հայաստանի բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, «Հայփոստ» ընկերության գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Արայիկ Աբրահամյանը, Յուրի Երզնկյանի դուստր, պրոֆեսոր Անետա Երզնկյանը, Ֆիլատելիստների հայկական ասոցիացիայի նախագահ Հովիկ Մուսայելյանը:

Նամականիշի մարումն ուղեկցվեց Յուրի Երզնկյանին նվիրված դասախոսությամբ, որը Երևանյան գրքի փառատոնի շրջանակում ներկայացրեց ռեժիսորի դուստրը՝ Անետա Երզնկյանը:

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

➢1 վանդման մեթոդիկայի ամբիոններ (ամբիոնի վարիչի ժ/պ՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն. Սամվելյան):

Ֆակուլտետը առկա և հեռակա համակարգերում թողարկում է շրջանավարտներ ինը մասնագիտություններով՝ բակալավրի կրթական ծրագրով չորս (կենսաբանություն, քիմիա, աշխարհագրություն, շրջակա միջավայրի գիտություններ) և մագիստրոսի կրթական ծրագրով հինգ (կենսաբանություն, քիմիա, աշխարհագ-

րություն, լանդշաֆտային պլանավորում և շրջակա միջավայրի գիտություններ):

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը համալրված է գիտամանկավարժական փորձարարությունև գիտահետազոտական մեծ ներուժ ունեցող բարձրորակ պրոֆեսորադասախոսական անձնակազմով: Ֆակուլտետի ամբիոններում աշխատում են ՀՀ ԳԱԱ մեկ ակադեմիկս, գիտությունների տասնմեկ դոկտոր և քսաներեք թեկնածու, ովքեր իրենց մասնագիտական բնագավառներում հայտնի գիտնականներ են թե՛ հանրապետությունում, և թե՛ երկրի սահմաններից դուրս:

Ֆակուլտետի գործունեության մեջ մեծ ավանդ ունեն քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մեժլում Երիցյանը, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Կարապետյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տիգրան Թանգամյանը, աշխարհագրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Յուրիկ Մուրադյանը և ուրիշներ:

Ֆակուլտետի տարեգրությունը մեծապես կապված է ոլորտի երախտավորներ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Հարությունյանի, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Կամսար Ավետիսյանի, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Գեորգի Ալեքսանդրյանի, Դորիկ Պողոսյանի և շատ ուրիշ նվիրյալների անվան հետ:

Միջազգային կապեր

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի ուսանողներն «Էրազմուս պլյուս» ծրագրի շրջանակներում մեկ կիսամյակ ուսումնառություն են անցնում Բոկուի բնական գիտությունների համալսարանում (Ավստրիա), իսկ ներկա պահին այդ համալսարանում իր թեկնածուական ատենախոսության հետազոտական աշխատանքներն է կատարում ֆակուլտետի «Աշխարհագրություն» մասնագիտության ասպիրանտ Հայարփի Հակոբյանը:

Վերոհիշյալ ծրագրի շրջանակներում ֆակուլտետի առաջատար մասնագետները Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանում հանդես են դասախոսություններով:

ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Համալսարանի հումանիտար ընթերցանության սրահում անցկացվեց «Ուսումնական համալիր դաշտային պրակտիկա և դպրոցական զբոսաշրջություն» գրքի շնորհանդեսը՝ համահեղինակությամբ Ռուզաննա Սադոյանի, Ներսես Սամվելյանի և Անահիտ Մինասյանի: Միաժամանակ ընթերցասրահում ներկայացվել էր Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի երկու մասնագիտություններին՝ կենսաբանությանը և աշխարհագրությանը վերաբերող մասնագիտական գրականություն: Ընդհանուր առմամբ ներկայացված էր 111 հեղինակի 145 գիրք, որոնց մեջ ամենահինը Հարություն Ինճիկյանի՝ 1945-ին թվագրված գիրքն էր:

Ելույթ ունեցողները ոչ միայն կարևորեցին ձեռնարկի անհրաժեշտությունն ու ճիշտ ժամանակին հրատարակելը, այլև արժևորեցին գիրքն ընդհանրապես:

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրիկ Մուրադյանը կարևորեց գիրքը որպես մնայուն արժեք, ընդգծեց նորաստեղծ ձեռնարկի առավելությունները՝ պրակտիկայի և տեսության համադրման տեսանկյունից:

Դոցենտ Ռուզաննա Սիմոնյանը փաստեց՝ յուրաքանչյուր նոր ուսումնական, ճանաչողական, գիտական ձեռնարկ օգնում է ուսանողին և ուսուցչին:

Վարդուհի Հովհաննիսյանի կարծիքով գիրքը ստեղծվել է ժամանակին, դաշտային ուսումնական պրակտիկաների վերականգնումն էլ շատ էր անհրաժեշտ: Ինչպես ասում են՝ բնությունը աշխարհագետի լաբորատորիան է, այս գրքի միջոցով էլ ուսանողները կարող են իրենց համար աշխատանքի նոր հեռանկարներ մշակել:

Ֆակուլտետի Ուսանողական խորհրդի նախագահ Մարիամ Սարգսյանն ընդգծեց ձեռնարկի կարևորությունը, որը թույլ կտա տեսական գիտելիքները ամրապնդել պրակտիկայի միջոցով:

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուզաննա Սադոյանը ներկայացրեց գրքի ստեղծման նախապատմությունը. տարիներ առաջ ռուս կոլեգաների հետ հանդիպումը հուշեց, որ ձեռնարկն ունենա ռուսերեն բաժին, որպեսզի այն օգտակար լինի նաև օտարալեզու ուսանողների համար:

«Ձեռնարկը կիրառելի է բնագիտության կազմի բոլոր գիտությունների համար, ունիվերսալ ձեռնարկ է պրակտիկայի մասին՝ որպես ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ»,-ասաց Ռ. Սադոյանը՝ հույս հայտնելով, որ այն կդառնա սեղանի գիրք:

Մեժլում Երիցյանը գիրք գրելը մեր օրերում համարեց խիզախություն, հատկապես երբ այն սպասված է:

Գրքի բովանդակությանը և ուսումնական դաշտային պրակտիկայի կազմակերպման մեթոդաբանությանն ու եղանակներին անդրադարձավ Ներսես Սամվելյանը: Նա կարևորեց տեսությունը՝ ասելով, որ ճշմարտության չափորոշիչը պրակտիկան է: Բնագիտությունը պահանջում է անընդհատ սովորել բնության լեզուն: Բանախոսն ընդգծեց նաև ձեռնարկում զետեղված՝ զբոսաշրջությունը ներկայացնող բաժնի կարևորությունը հատկապես նոր ժամանակներում. զբոսաշրջությունը հայրենաճանաչությունը զարգացնելու լավագույն ձևն է:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԼՐԱՀՈՍ

Խորհրդանշական ցուցադրություն

Մանկավարժական համալսարանի Կերպարվեստի ֆակուլտետի սրահում բացվեց 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված ցուցահանդես:

Ֆակուլտետի տարբեր ամբիոնների դասախոսները ներկայացրել էին սեպտեմբերի 27-ը խորհրդանշող 27 ստեղծագործություն: Ստեղծագործությունների վերնագրերը խոսուն էին՝ «Սպասում», «Բուխենվալդ», «Նոկտյուրն» …

Ցուցահանդեսին ներկա էին բուհի ղեկավարները: Նրանք կարևորեցին օրվա խորհուրդն իմաստավորող ստեղծագործական աշխատանքները՝ փաստելով, որ ապրողների համար շատ կարևոր են հերոս տղաներին նվիրված նման նախաձեռնությունները:

«Աշխատանքները բազմաբնույթ են, թեմատիկ. և՛ դեկորատիվ-կիրառական բնույթի արվեստի գործեր կան, և՛ գեղանկարչական, և՛ գրաֆիկական ստեղծագործություններ,- ասաց ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը, ում կարծիքով նման առիթները միշտ պետք է հիշատակվեն:- Որովհետև արվեստի լեզուն և՛ ուրախության, և՛ հոգևոր զգացմունքների արտահայտման ձև է»:

Արտագնա նիստ Աղավնաձորում

Աղավնաձորի ուսամնական բազայում Մանկավարժական համալսարանի Արհեստակցական կազմակերպությունը կազմակերպեց երկօրյա դասընթաց և արհկոմիտեի արտագնա նիստ, որի ընթացքում արհմիության անդամներին ներկայացվեց կառույցի գործունեության ուղղությունները, կարևորությունն ու նշանակությունը:

Դասընթացի հենց սկզբում ՀՊՄՀ-ի Արհեստակցական կազմակերպության նախագահ Էդիկ Գուլյանը և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի երիտասարդական հանձնաժողովի նախագահ Էդգար Չախոյանն ինտերակտիվ մեթոդով նախ տեղեկացան մասնակիցների ակնկալիքների մասին, որից հետո վերջնական տեսքի բերեցին նախապես մշակած ծրագիրը:

Ներկաներն անդրադարձան «Ինչ է արհեստակցական կազմակերպությունը», «ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպության գործառույթները, գործունեությունը և մեխանիզմները», «Սոցիալական գործընկերություն, կոլեկտիվ բանակցություն». թեմաներին՝ ընդգծելով արհմիութենական աշխատանքի առանձնահատկությունները:

Դասընթացավարներ Էդգար Չախոյանին և Էդիկ Գուլյանին հյաջողվեց ժամանակակից նորարարա-

կան մեթոդներով դասավանդման փորձ ունեցող դոցենտներին ու պրոֆեսորներին պահել սովորողի կարգավիճակում:

Դասընթացի մասնակիցները հաջորդ օրը աշխատանքային խմբերով մշակեցին ՀՊՄՀ-ի և ՀՊՄՀ Արհեստակցական կազմակերպության միջև կնքվելիք Կոլեկտիվ պայմանագրի նախագիծը, որը լրամշակման ենթարկվելուց հետո կազմակերպության ղեկավարը կներկայացնի բուհի ղեկավարությանը:

Դասընթացը կազմակերպել էին Հայաստանի բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը և ՀՊՄՀ Արհմիությունը:

Պատասխանատվությամբ ու սիրով

«Ամեն սկիզբ ու հետաքրքիր ընթացք ունենում է նաև իր տրամաբանական ավարտը»,- ասում է Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի Ուսանողական խորհրդի նախագահ Նարեկ Գրիգորյանը, ով նախորդ ուստարում ավարտեց իր ուսումնառությունը:

Ուսանողական կյանքի առաջին տարում նա դարձավ ուսանողական խորհրդի անդամ, իսկ երկրորդ կուրսում արդեն նրան վստահվեց ֆակուլտետի Ուսանողական խորհրդի ղեկավարումը:

Առաջին քայլը առաջին կուրսեցիների դիմավորումն էր, որին պատրաստվել էր սիրով:

Շատ է սիրում բնությունը, որի բացահայտման լավագույն բանալին իր համար դարձավ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը:

Ուսումնառության ընթացքում առաջնորդվել է «Անվերջ աշխատանք և ձգտում ավելիին» կարգախոսով: Ուսանողական խորհրդում մարդկային հարաբերությունները ամենակարևորն էին. նրան հաջողվում էր մշտապես ապահովել ջերմ, ընկերական, անկեղծ ու անմիջական մթնոլորտ:

Կարևորելով ուսումն ու անընդհատ զարգացումը՝ չմոռացավ նաև հայրենիքի պաշտպանությունը, ինչի վառ վկայությունն է մասնակցությունն Արցախի քառօրյա և 44-օրյա պատերազմներին:

Երրորդ կուրսի ուսանող էր, երբ սկսվեց քառասունչորսօրյա պատերազմը:

Այդ առթիվ նշում է. «Սա այն բացառիկ դեպքերից էր, երբ զգացողությունս, ցանկությունս ու մտայնությունս մեկն էր՝ ժամ առաջ անդամագրվել հայրենիքի պաշտպանության վեհ ու անձնվեր գործին և կանգնել սահմանը պաշտպանող զինվորի կողքին»:

Մասնակցելով Ջրականի մարտերին, լինելով կռվի թեժ կետերում, անցնելով երկու պատերազմների միջով՝ Նարեկ Գրիգորյանը ձևակերպել է պատերազմի սեփական սահմանումը. «Պատերազմը մի անմարդկային, չարաբաստիկ ու դժգույն աղետ է, որի պատճառով մարում են բազմաթիվ երազանքներ, նպատակներ ու կյանքեր և թողնում դատարկություն…»:

Պատերազմի ավարտից հետո վերադարձավ հարազատ ֆակուլտետ, որտեղ իրականացրեց մի շարք կարևոր ծրագրեր և մշտապես եղավ ուսանողների կողքին:

Անթաքույց հպարտությամբ բարձրաձայնում է՝ Մանկավարժական համալսարանն իր կյանքում կարևոր դեր է ունեցել, չէ՞ որ այն մի բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի սաները հետագայում մեծ դեր են ունենում գալիք սերունդների կրթության, դաստիարակության և ձևավորման գործում:

Ապա հավելում է, որ Ուսանողական խորհրդի անդամ լինելը բավականին բարդ, պատասխանատու, բայց և հաճելի աշխատանք է, որն ուսանողին տալիս է հետաքրքիր առօրյա իսկ հետագայում թողնում վառ և տպավորիչ հիշողություններ…

Արդեն բակալավրիատի շրջանավարտ Նարեկ Գրիգորյանը մտածում է կյանքի հաջորդ քայլերի մասին, մշակում է նոր ծրագրեր ապագայի համար: Միաժամանակ համոզված է, որ իր համար հարազատ դարձած ֆակուլտետը կշարունակի զարգանալ և բարեփոխումների ճանապարհով նորովի ներկայանալ ուսանողներին՝ յուրաքանչյուր ուսանողի կյանքում նշանակալի դեր ու նշանակություն ունենալ:

Նարեկը Մանկավարժական համալսարանից իր հետ կտանի ուսումնառության և ուսանողական տարիների վառ ու անկրկնելի գույները:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼՐԱՀՈՍ

ՈՒԳԸ ընդհանուր ժողովը

Սեպտեմբերի 20-ին Մանկավարժական համալսարանում անցկացվեց Ուսանողական գիտական ընկերության ընդհանուր ժողովը:

Ուսանողական գիտական ընկերության առաջիկա աշխատանքների մասին խոսեց Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը: Նա վստահեցրեց, որ բուհի ուսանողակենտրոն քաղաքականությունն անպայման կնպաստի երիտասարդական կառույցի աշխատանքի և գիտահետազոտական գործունեության ակտիվացմանը: Բանախոսը հոբելյանական տարում կարևորեց Ուսանողական գիտական ընկերության աշխատանքը՝ ներկա մարտահրավերների համատեքստում ուսանողներին հորդորելով պատվով հաղթահարել դժվարությունները:

ՈՒԳԸ ընդհանուր ժողովին ներկա էին 47 անդամներ: Նիստի նախագահ ընտրվեց Էդիկ Գուլյանը, ով ներկայացրեց ՀՊՄՀ Ուսանողական գիտական ընկերության ստեղծման, գործունեության և կատարած աշխատանքների մասին ամփոփ տեղեկատվություն: Է. Գուլյանը խոսեց համալսարանում Ուսանողական գիտական ընկերության դերի և կարևորության մասին՝ վկայակոչելով տարիների պատմությունը: Բուհի սկզբնավորման առաջին տարիներից տարբեր անվանումներով գործող կառույցը Ուսանողական խորհրդին զուգահեռ ակտիվորեն խթանել է ուսանողների գիտական առաջընթացը, կազմակերպել ուսանողական գիտաժողովներ:

Է. Գուլյանը տեղեկացրեց, որ ՈՒԳԸ նոր կանոնադրությունը լրամշակվել է բուհի տարբեր օղակներում. Նրանում ընդգծվել է մանկավարժական գիտական միտքը, հստակորեն ներկայացվել են կառույցի նպատակները, գործողությունները և խնդիրները:

Ընդհանուր ժողովում ՈՒԳԸ նոր նախագահ ընտրվեց Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ուսանող Մարգարիտա Շահնազարյանը, ում գործունեությունը ժողովի անդամները բարձր գնահատեցին:

Աղբահանության խնդիրը՝ լուրջ մարտահրավեր

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դասախոսները և ուսանողները սեպտեմբերի 23-ին իրականացրին էկոլոգիական ձեռնարկ՝ «100 ուսանող և դասախոս՝ բուհի 100-ամյակին ընդառաջ» կարգախոսով: Նրանք կենցաղային աղբից մաքրեցին Երևանյան լճի ափամերձ հատվածը. պոլիէթիլենային, պլաստիկ իրեր, կենցաղային աղբ և այլն՝ լճի հարակից տարածքում և ափին, որտեղ աղտոտվածության պատճառով առաջացել են նաև բնապահպանական մի շարք խնդիրներ:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Ռուզաննա Սադոյանը կարծում է՝ աղբահանության խնդիրը լուրջ մարտահրավեր է ողջ մարդկության համար:

«Էկոլոգիական միջոցառումն ունի ուսումնադաստիարակչական մեծ նշանակություն: Մասնակցելով այս ձեռնարկին՝ ապագա ուսուցիչներն իրենց և իրենց աշակերտների մեջ կսերմանեն էկոլոգիական կրթության հիմունքները, շրջակա միջավայրը մաքուր պահելու մշակույթը»,-ասաց ֆակուլտետի դեկանը՝ հույս հայտնելով, որ նման նախաձեռնությունները կլինեն շարունակական, քանի որ տարածքը մեկ օրվա կամ մեկ նախագծով հնարավոր չէ մաքրել:

Անդրադառնալով բնապահպանական խնդիրներին՝ Ռուզաննա Սադոյանն իր մտահոգությունը հայտնեց՝ կուտակված աղբը կարող է հանգեցնել լճի ճահճացման, միաժամանակ տարատեսակ աղբը առաջացնում է էկոհամակարգի հավասարակշռության խախտում:

«Լիճը կարմիր գրքում գրանցված մի շարք կենդանատեսակների համար ապաստարան է»,- հավելեց Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սամվել Պիպոյանը, ում համար օրվա նախաձեռնությունն ինչ-որ տեղ հորդոր է՝ համախմբվել շրջակա միջավայրի մասին հոգ տանելու, աղտոտվածության դեմ պայքարելու համար:

Երևանի քաղաքապետարանն էլ մասնակիցներին տրամադրվել էր աղբահանության համար անհրաժեշտ պարագաներ:

«100 ուսանող և դասախոս՝ բուհի 100-ամյակին ընդառաջ» ձեռնարկը ամփոփվեց գործնական դասով. մաքրման պրոցեսից հետո նախապես տեղադրված ցանցերում բռնված ձկներով ուսանողները ծանոթացան Երևանյան լճում բազմացող ձկնատեսակների, նրանց տարբերություններին, անդրադարձան ձկների և թռչունների միջև եղած կապին:

Բնության գրկում նման նախաձեռնությունների ու դասերի անցկացումն ուսանողներին տալիս է գիտելիքներ ողջ կյանքի համար՝ ուսումնակրթական բաղադրիչում կարևորելով բնապահպանական խնդիրները:

Քննարկման հարթակում պոլսահայ գրականություն էր

«Ինչերի միջով չի անցել արևմտահայ գրականությունը, ինչ չարագուշակ ճակատագիր են կարդացել նրա սնարի մոտ վերջին հարյուր քսան տարին, բայց նա, այդ լուսավոր գրականությունը, ի հեճուկս նույն ճակատագրի հարվածների, ապրեց ու տոկաց, լցրեց աշխարհն իր զարմանալի կենսունակությամբ, վերադարձավ, ինչպես Աբովյանն էր հույսի շողով դիմում անցյալին, «էլ ետ իր առաջին փառքին հասնելու»,-համահայկական գիտաժողովն այս ներածական խոսքով բացեց պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը՝ փաստելով, որ «հասնելու, նորոգելու ճիգը մեր աչքի առջև է, այդ յուրատեսակ վերադարձը: Եվ թե ինչպես, վկայելու է մեր այս համահայկական գիտաժողովի փաստը, վկայելու է ի ցույց դնելու վերադարձի անցած տարիները՝ 20-րդ դարի կեսից մինչև մեր օրերը»:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը «Համազգային» հայ կրթական և մշակութային միության հետ կազմակերպել էր «Պոլսահայ գրականությունը 20-րդ դարի կեսից մինչև մեր օրերը» խորագրով համահայկական գիտաժողով:

Գիտաժողովի մասնակիցների աշխարհագրությունն ընդգրկուն էր, որը վկայում էր քննարկվող հարցի արդիականության մասին:

Գիտաժողովի բացման կապակցությամբ իրենց օրհնության խոսքն էին հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Պոլսո Պատրիարք Ամենապատիվ տեր Սահակ Բ. Մաշալյանը. ուղերձները ներկայացրին տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը և պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը:

Գիտաժողովի նախաձեռնությունը և մասնակիցներին ողջունեցին ՀՊՄՀ ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը, ՀՊՄՀ Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանը, «Համազգային» հայ կրթական և մշակութային միության կենտրոնական վարչության ատենապետ Զաքար Քեշիշյանը, «Համազգային»-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Ռուզան Առաքելյանը, ՀԳՄ վարչության քարտուղար Պետրոս Դեմիրճյանը:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը «Համազգային» հայ կրթական և մշակութային միության հետ կազմակերպել էր «Պոլսահայ գրականությունը 20-րդ դարի կեսից մինչև մեր օրերը» խորագրով համահայկական գիտաժողով:

Գիտաժողովի մասնակիցների աշխարհագրությունն ընդգրկուն էր, որը վկայում էր քննարկվող հարցի արդիականության մասին:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՊՄՀ ռեկտոր, հ.գ.դ., պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը, ով հույս հայտնեց, որ գիտաժողովում ընդգրկված զեկուցումները որոշակիորեն կբարձրացնեն պոլսահայ գրականության կնճռոտ հարցերը:

Ռեկտորը կարևորեց հայոց լեզուն և գրականությունը՝ որպես դպրոցի կարևոր բաղադրիչ, որովհետև աշակերտներին հնարավորություն են տալիս՝ հասկանալու, թե ով է մեր ժամանակի հերոսը:

Գիտաժողովի մասնակիցները լսեցին Պոլսո գրականության լուսավոր ու կնճռոտ կողմերը ներկայացնող ուշագրավ զեկուցումներ, զեկուցողները հատկապես անդրադարձան Զահրատի և Զարեհ Խրախունու ստեղծագործական աշխարհի առանձնահատկություններին:

ԵՊՀ պրոֆեսոր Վազգեն Գաբրիելյանը ներկայացրեց Պոլիսը պոլսահայ բանաստեղծության մեջ, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Հիլդա Գալֆայան-Փանոսյանն անդրադարձավ պոլսահայ բանաստեղծության նոր շարժմանը՝ 1960-ական թվականներից մինչև մեր օրերը, ՀՊՄՀ պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը ներկայացրեց Ռոպեր Հատեճյանին և նրա խմբագրած «Մարմարա» օրաթերթը՝ որպես պոլսահայ գրական կյանքի կազմակերպիչ, ԵՊՀ պրոֆեսոր Արծրուն Ավագյանն անդրադարձավ Հակոբ Մնձուրու «Սուրբ Գևորգ» պատմվածքին:

Ներկաները հետաքրքրությամբ լսեցին նաև Քուվեյթից հրավիրված Հրայր Ճեպեճյանին, ով հանդես եկավ «Հոգևոր կյանքի ընկալումը Շնորհք Պատրիարքի գրական, եկեղեցական-ազգային և համամարդկային հորիզոնների մեջ», ուր ներկայացրեց Շնորհք Պատրիարք եկեղեցականին, գրողին, մանկություն չունեցող մարդուն և պարզապես մարդուն:

Ներկաները լսեցին նաև պրոֆեսոր Հրանտ Մարգարյանի (ԱՄՆ) զեկուցումը պոլսահայ թատրերգության մասին 20-րդ դարի կեսից մինչև մեր օրերը:

ԵՊՀ դոցենտ Լիլիթ Սեյրանյանը գաղտնազերծեց Զահրատի «բաբախող աշխարհի՝ փոքրի ու մեծի պատկերային խաղարկումները»՝ եզրափակելով՝ «բոլոր մեկնումների և վերադարձի սահմանը մարդն է կամ՝ ընդարձակվող և սեղմվող տիեզերքի հիմքում սաղմն է, սերը, որ պտղաբերում է հոգիներում»:

«Ակօս» թերթի հայերեն բաժնի խմբագիր Բագարատ Էսդուքյանը (Թուրքիա) առցանց ձևաչափով ներկայացրեց «Արևելահայ գրականության ընկալումը Հանրապետական շրջանի թրքահայ մամուլի, գրական դպրոցների և գրական շրջանակի մեջ» զեկուցումը՝ միաժամանակ արտահայտելով իր մտահոգությունները հայերենի երկու՝ արևելահայ և արևմտահայ ճյուղերի պատմականորեն անջատվածության մասին:

Հագեցած էր նաև երկրորդ նիստի օրակարգը, ուր զեկուցումներով հանդես եկան պրոֆեսոր Աշոտ Գալստյանը, գրող Ֆելիքս Բախչինյանը և ուրիշներ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մեր շրջանավարտները

Հաջողելու գրավականը սերն է

Ուսուցչի աշխատանքում հաջողելու լավագույն գրավականը սերն է, սերը դեպի մասնագիտական առարկան և աշակերտները: Հենց այդ սերն էլ Աստղիկ Հովսեփյանին բերել էր Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ, ուր վեց տարի շարունակ սովորել է գերազանցությամբ:

Վեց տարվա ընթացքում կուտակած գիտելիքներն այսօր Աստղիկ Հովսեփյանին օգնում են ամենատարբեր ոլորտներում:

ՀՊՄՀ շրջանավարտը հատկապես կարևորում է մանկավարժական և հոգեբանական տարբեր առարկաների ուսումնասիրումը, որոնք հնարավորություն են տալիս ոչ թե պարզապես մտնել դասարան, դասավանդել ու հեռանալ, այլ հասկանալ մանկավարժության խորությունը, ճանաչել յուրաքանչյուր աշակերտին ու նրան մոտենալ ըստ իր առանձնահատկությունների:

Չէ՞ որ ուսուցչի աշխատանքը շատ կարևոր է և պարտավորեցնող ու իրենից շատ բան է կախված: Լավ վերաբերմունքով ու ճիշտ մոտեցմամբ է նաև պայմանավորված՝ աշակերտը կսիրի՞ տվյալ առարկան, թե ոչ:

Ուսուցիչը կարող է թևեր տալ և նաև վայրկյանների ընթացքում կոտրել աշակերտին ընդամենն իր մեկ խոսքով... Ինչպես վերաբերվել աշակերտին՝ սովորել է հարազատ բուհում, ամբարել է գիտելիքներ և դրանք կիրառելու հմտություններ:

Աստղիկն արդեն ինը տարի է, ինչ դասավանդում է Դիլիջանի № 2 հիմնական դպրոցում, որի շրջանավարտն է ինքը: Ժպիտով է հիշում իր առաջին աշխատանքային օրը, աշակերտների ժպտուն աչքերն ու իր մեծ ուրախությունը: Նա կիրառում է նոր ու հետաքրքիր մեթոդներ, կազմակերպում տարբեր էքսկուրսիաներ, խաղ-վիկտորինաներ, որոնք էլ աշակերտների մեջ առաջացնում են հետաքրքրություն և սեր դեպի աշխարհագրությունը: Դա օգնում է Աստղիկին ճանաչել մեր մոլորակը և ձևավորել ճիշտ աշխարհայացք:

«Դպրոց մտնելիս զգացողություններս ամբողջությամբ փոխվում են: Ինչքան էլ ծանր օր կամ վատ տրամադրություն ունենամ, ամեն բան անցնում է, երբ հայտնվում եմ աշակերտների առջև ու նայում նրանց ժպտուն ու սպասումով լի աչքերին: Երեխաներն ինձ տալիս են դրական էներգիա, նրանք իմ կյանքի ամենակարևոր բաղադրիչներից մեկն են ու անբաժան մասը»,-ասում է Աստղիկը:

Առաջնորդվելով «Սովորեցնելով ուրիշներին՝ սովորում ենք ինքներս» կարգախոսով՝ ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի շրջանավարտը շարունակում է իր մասնագիտական ճանապարհը՝ վստահ, որ յուրաքանչյուր աշակերտ մեծ դեր ունի ուսուցչի կյանքում, քանի որ կարող է սովորեցնել ավելին:

Դե իսկ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետն Աստղիկի կյանքում ունեցել է առանձնակի նշանակություն. այստեղ է կատարել իր մասնագիտական առաջին քայլերը, հմուտ ու բանիմաց դասախոսների շնորհիվ կուտակել գիտելիքների մեծ պաշար ու առաջ շարժվել: Այդ ճանապարհին հատկապես կարևորում է դաշտային և ուսումնամանկավարժական պրակտիկաները, որոնք մանկավարժի ձևավորման կարևորագույն բաղադրիչն են և լավ հնարավորություն՝ տեսական գիտելիքները գործնական հմտությունների փոխանցելու գործում:

Զրուցեց Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆԸ

ԵՐԱԶԵՔ, ՀԱՎԱՏԱՑԵՔ, ԳՈՐԾԵՔ...

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի երեք ուսանողներ ERASMUS+ եվրոպական շարժունակության ծրագրով մեկնեցին Ավստրիա, որտեղ անցկացրին հինգուկես ամիս:

Ծրագրի մասնակիցներից «Աշխարհագրություն» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրի ուսանողուհի Գոհար Եղիազարյանը պատմում է. «Եթե փորձեմ նկարագրել Ավստրիայում անցկացրած ամիսներն, ապա պարզապես կասեմ՝ շնորհակալ եմ իմ սիրելի համալսարանին, ERSMUS+ եվրոպական շարժունակության ծրագրին, այդ ամիսների ընթացքում ինձ աջակցած մարդկանց, նախախնամություններին և, իհարկե, ինձ՝ աշխատասիրության և կամքի ուժի համար»:

Գոհարի համար ճանապարհորդելը միշտ երազանք է եղել, թեպետ իր ամենալուսավոր երազները Բիգ Բենյան հմայքով էին զարդարվում, այնուամենայնիվ, ծրագրի մասին իմանալու առաջին օրից ի վեր Ավստրիայի հետ կապվեց մի անբացատրելի ուժով, որն անընդհատ կրկնում էր՝ կոտրիր ծուլությունդ և ի գործ:

Չխորանալով դեպքերի մանրամասնություններում՝ Գոհարը նշում է. «Ինչպես ասում է իմ շատ սիրելի տիկին Մաթոսյանը, նպատակը երբևէ հանդիպած ամենաուժեղ զենքն է, իսկ աշխատասիրությունը՝ ամեակարևոր նախապայմանը երազանքներին ընդառաջ քայլելու:

Վստահաբար՝ տիեզերքում մի բարձրագույն ուժ կա, որը նպատակդ կրկնակի արագությամբ ուղարկում է դեպի քեզ, քան դու ես շարժվում, ուղղակի այստեղ էլ մի նախապայման կա. հավատք, բարություն, աշխատասիրություն եռանկյունին պիտի իդեալական համակշռության մեջ լինեն»:

Ընդգծելով ծրագրի ընձեռած մասնագիտական հնարավորությունները՝ ուսանողուհին նշում է, որ Վիեննայում եղած ժամանակահատվածում ավելի քան արժևորեց Մանկավարժական համալսարանը, երկու համալսարանների միջև հաստատված կայուն, խոր և արդյունավետ համագործակցությունը պայմանավորված է նաև միջազգային համագործակցության բաժնի ջերմ վերաբերմունքով:

«Մասնագիտական գիտելիքների պակաս չենք զգացել. գուցե դա պայմանավորված է այն հանգամանքով, որ բնական գիտությունների ներսում ամեն ինչ գրեթե հաստատուն է և կապ չունի, թե ինչ լեզվով կուսումնասիրես, նույնը վերաբերում է նաև մեթոդական զինանոցին, մեր ամբիոնի դասախոսների ջանքերի շնորհիվ այս մասով նույնպես մեծ տարբերություններ չենք նկատել»,- ասում է Գոհարը:

Ուսանողուհին պատմեց նաև Վիեննայում իր բացահայտած անկյունների մասին. «Վիեննան քաղաք է, որի ամեն անկյունում մի գեղեցիկ բան կարող ես գտնել, աշխարհահռչակ ճանաչում ունեն սուրբ Ստեփաննոսի տաճարը, Պրատեր զբոսայգին, Կարլսկիրխե եկեղեցին, Ազգային օպերան, Բելվեդեր, Հոֆբուրգ, Շյոնբրուն պալատական համալիրները, Մոցարտի ու Ֆրոյդի թանգարանները, մեզ համար անգնահատելի հայկական երկու եկեղեցիները՝ Մխիթարյան միաբանության և Սուրբ Հռիփսիմե եկեղեցիները»:

«Վիեննայում ես հնարավորություն ունեցա Հայաստանի տնտեսությանն առնչվող ծրագիր ներկայացնել: Կիրառական հետազոտության շրջանակներում հանձնարարված էր, ընտրելով օտարերկրացի գործընկեր, զարգացման կիրառական ծրագիր ներկայացնել, և ես ծրագրիս մեջ որպես հավանական գործակից նշել եմ Ավստրիական զարգացման գործակալությանը, և ելույթի վերջում ներկաներից մեկը սկսում է մեծ հետաքրքրությամբ խոսել և նույնիսկ որոշ մանրամասներ ներկայացնել Հայաստանի մասին, որոնք ինձ համար էլ են նորություն, և միայն այդ ժամանակ, լարելով ուշադրությունս, նկատում եմ, որ նա Ավստրիական զարգացման գործակալության աշխատակից է:

Ի դեպ նախագիծը պաստառի տեսքով եղել է նաև Վիեննայի տեխնիկական թանգարանում, ցավոք Covid 19-ով վարակված լինելու պատճառով չկարողացա թանգարանում նախագծերի ցուցադրությանը ներկա գտնվել: Մեր համալսարանը նախատեսել էր նոյեմբեր ամսին մշակութային ցերեկույթներ կազմակերպել, որի ընթացքում մենք էլ պիտի Հայաստանն իր գունեղ մշակույթով ներկայացնեինք, սակայն, կրկին համավարակը չեղարկեց այն: Իրականում, քովիդով պայմանավորված, դասերի մեծամասնությունը առցանց է եղել և, ցավոք, հաղորդակցությունն օտարերկրյա ուսանողների հետ սուղ էր, այնուամենայնիվ, երբեք մեզ Վիեննայում մենակ չենք զգացել:

Հետաքրքիր էր, որ Վիեննա հասնելուն պես սկսել ենք հայկական տարրեր փնտրել, ու այս հետքերով առաջինը գտել ենք Մխիթարյան միաբանության կաթոլիկ եկեղեցին, մեկ շաբաթ անց՝ Վիեննայի հայ առաքելական եկեղեցին՝ Սուրբ Հռիփսիմեն, որտեղ էլ քահանայի՝ Տեր Անդրեասի ջանքերով ծանոթացել ենք մեր հայ ընկերների հետ»,- ամփոփեց Գոհարը:

Ամեն ինչ սկսվեց ընկերությունից ու այնքան յուրահատուկ դարձավ, որ Գոհարը որոշեց անգամ մկրտվել այնտեղ՝ սրբազան կապ և հիշողություններ ստեղծելով կարճ ժամանակի ընթացքում հարազատ դարձած ընտանիքի և ընկերների հետ:

Վիեննայում ապրած յուրաքանչյուր օրը հիշարժան էր, և Գոհարը դժվարացավ առանձնացնել որևէ մեկը, իսկ կրտսեր ընկերներին մեկ հորդոր ունի՝ երազեք, հավատացեք և գործեք...

Լավագույն ուսանողուհին

Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ ամեն տարի անցկացվում է «Լավագույն ուսանող» մրցույթը, որն ուսանողներին տալիս է առավել լավ սովորելու մոտիվացիա և բազմաթիվ հնարավորություններ:

Մեր ֆակուլտետի ուսանողները ևս անմասն չեն մնում և այդ մրցույթում մշտապես գրանցում են հիանալի արդյունքներ:

Վերջին մրցույթի արդյունքներով «Կենսաբանություն» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրի առաջին կուրսի ուսանողուհի Քնարիկ Համբարձումյանն ընտրվեց ՀՊՄՀ «Լավագույն ուսանող»:

«Առաջին կուրսում էի սովորում, երբ հնարավորություն ունեցա մասնակցել մրցույթի մրցանակաբաշխության արարողությանը: Հիշում եմ, երբ դահլիճում նստած նայում էի լավագույնի տիտղոսը կրող ուսանողներին, ակամա ինձ պատկերացնում էի նրանց կողքին: Հենց այդ ժամանակ էլ իմ առջև դրեցի փոքր-ինչ անիրական թվացող ու թաքուն նպատակ՝ մի օր դառնալ լավագույն ուսանող»,-ասում է Քնարիկը:

Դե, իսկ տարիներ անց, երբ արդեն համապատասխանում է մրցույթի առաջադրած պահանջներին՝ Քնարիկն ապացուցեց, որ արժանի է լավագույնի տիտղոսին:

«Երբ իմացա, որ մրցույթի մասնակցության հայտերն արդեն ընդունվում են, որոշեցի դիմել, ու երկու փուլերում էլ զգացողություններս շատ խառն էին, որովհետև թե՛ ֆակուլտետային, թե՛ հիմնական փուլերում ունեի ուժեղ մրցակիցներ, որոնցից յուրաքանչյուրն էլ արժանի էր լավագույնի կոչմանը, իսկ արդեն բեմում կանգնած, երբ լսեցի իմ անունը, չէի հավատում, որ այդ ամենն ինձ հետ է կատարվում:

Սակայն շուտով հասկացա, որ երազանքներն իսկապես իրականանալու հատկություն ունեն, երբ շատ ես աշխատում»,-ասում է Քնարիկը:

Լավագույն ուսանողուհին գիտի՝ լավագույնի տիտղոսը պարտավորեցնող է, և իր հետագա քայլերով էլ կփորձի արժանի օրինակ լինել կրտսեր ընկերների համար:

Տեսական գիտելիքների ամրապնդում

Ամառվա վերջին հեռակա ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանողները աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Վարդուհի Հովհաննիսյանի գլխավորությամբ «Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն» և «Ընդհանուր երկրագիտություն» դասընթացների շրջանակում կազմակերպեցին ամփոփիչ դաս բնության գրկում:

Կոտայքի մարզի Բջնի գյուղում, Հրազդան գետի հովտում կատարեցին մի շարք դաշտային հետազոտություններ՝ ապարների և բուսատեսակների նմուշառում, Հրազդան գետի ջրի ջերմաստիճանի չափում, օդի հարաբերական խոնավության և ջերմաստիճանի չափումներ համապատասխան էլեկտրոնային գործիքներով:

Կատարեցին նաև հայրենագիտական շրջայց դեպի Բջնիի Սուրբ Աստվածածին եկեղեցի և Բջնիի բերդ ամրոց:

Ուսանողները ևս մեկ անգամ համոզվեցին, թե բնագետի համար որքան կարևոր է տեսական գիտելիքների ամրապնդումը գործնականում՝ բնության գրկում:

Մեծարման երեկո՝ նվիրված կինոօպերատորության երախտավորին

Սեպտեմբերի 30-ին Երևանի Կինոյի տանը հավաքվել էին կինոասպարեզի նվիրյալներ, անվանի դերասաններ, ռեժիսորներ և օպերատորներ, դասախոսներ՝ մեծարելու արվեստի վաստակավոր գործիչ, կինոօպերատոր Լաերտ Պողոսյանին, որը բազմաթիվ ֆիլմեր է նկարել, որոնք այսօր հայ կինոյի ոսկե էջերից են: Նա աշխատել է տաղանդավոր ռեժիսորների հետ, շուրջ 15 տարի Մանկավարժական համալսարանում դասավանդել կինոֆոտո վարպետություն, սերունդներին փոխանցել իր փորձն ու փորձառությունը:

«Մանկավաժական համալսարանն ինձ համար մի նոր աշխարհ էր, որովհետև այլ բան է նկարահանման աշխատանքը, այլ բան է դասավանդելը, իմացածդ հաղորդելը: Ես ուրախ եմ և հպարտ, որ իմ ուսանողներն արդեն կայացած մասնագետներ են, վարպետներ: Ի՞նչ արժե փորձը, որ չի փոխանցվում հաջորդ սերնդին»,-ասում է Լաերտ Պողոսյանը:

Դահլիճում ներկաներից շատերը նրա ուսանողներն են՝ այսօր արդեն կայացած մասնագետներ, որ շարունակում են վարպետի գործը: Հենց նրանք էլ պատրաստել էին կինոօպերատորության ոլորտի երախտավորին նվիրված ֆիլմ, որը հետ տարավ դեպի անցյալի հուշեր:

Լաերտ Պողոսյանի կյանքի վառ ու գունեղ դրվագներն արդեն կինոկադրերում են. ահա հիշողությունները տանում են հետ. մի փոքրիկ ստուդիա, որտեղ հավաքվել էին համախոհներով, 1962 թվական, երբ առաջին անգամ Հայաստանից օպերատոր էր մեկնում արտասահման Հայաստանի պարի պետական անսամբլի հետ, և դա Լաերտ Պողոսյանն էր: Առաջին տեսանկարահանումներն է անում՝ Բելլա Դարբինյան, Ժան Տատրյան, Ռոզի Արմեն, Մարկ Արյան, համերգային կատարումները ձևի մեջ դնելու առաջին փորձերը:

Վարպետն ափսոսանքով նկատում է՝ այսօր շատերը միանգամից փորձում են նկարել փառատոնային ֆիլմեր, մինչդեռ պետք է ֆիլմեր նկարել նախ արվեստի և ժողովրդի համար…Այսօր ով չգիտի իր նկարած ֆիլմերը՝ «Մենք ենք, մեր սարերը», «Նահապետ», «Չորի Միրոն», «Տժվժիկ»…:

Հիշում է՝ ինչպես էր նկարել Ծիծեռնակաբերդ բարձրացող մարդկային հոսքը, վախի ու անորոշության մթնոլորտում, և այդ ժապավենը թաքցրել իր ասիստենտ Սահակի օգնությամբ, փոխարենը ղեկավարությանը ներկայացնելով սովորական կադրեր… Հանդիսատեսը երբեք չգիտի, թե օպերատորի համար ինչ է յուրաքանչյուր կադրը, որի մեջ ակնթարթներ են քարանում. ինչպես ուսանողներն են ասում. «Վարպետի աչքում ցանկացած տեսարան պետք է վերածվի անթերի կադրի, կադրերը՝ ֆիլմերի, իսկ ֆիլմերը՝ կյանքի, կյանք, որ բաղկացած է հազարավոր կադրերից և էջերից»…

Այսօր արդեն վարպետը բոլորել է իր կյանքի 91-ամյակը, սակայն հայ կինոյի լեգենդի՝ Արտավազդ Փեթշյանի հետ նոր ֆիլմ նկարելու, նոր մոտեցումներ ձևավորելու միտքը նրան հանգիստ չի տալիս: Չի էլ ուզում հավատալ, որ ուղիղ 45 տարի է անցել այն օրից, երբ նկարահանումներ էին անում Արտավազդ Փելեշյանի հետ:

Երեկոն վարում է Արմեն Ամիրյանը, որը նույնպես եղել է Լաերտ Պողոսյանի ուսանող: Նա ջերմությամբ ներկայացնում է սիրելի դասախոսին, ում «ստեղծած յուրաքանչյուր կադրը հրաշագործություն է», թվարկում է նկարած ֆիլմերը՝ «Մատենադարան», «Առնո Բաբաջանյան՝ քո ժամանակակիցը», «Մենք», «Հայաստանի գագաթները», «Չարենց», «Չորի Միրո», «Արամ Խաչատրյան», «Մեր դարը»…Ապա հավելում է. «Այո, նա կարողացավ մեզ նվիրել «Մեր դարը», կարողացավ ոչ միայն ժապավենով, այլ նաև երևակայությամբ ցուցադրել իր ապրած ժամանակաշրջանը»:

Բեմահարթակակ հրավիրված Լաերտ Պողոսյանը վայելում է ջերմ խոսքեր, արժանանում պարգևների, ապա հուզված ամփոփում խոսքը՝ իմ տարիներն իմ հարստությունն են:

«Ձեզանից ամեն մեկն իմ կյանքի, օրերի, տարիների, պահերի մասնակիցն է եղել: Այստեղ են մարդիկ, որոնք ինձ հետ իրենց առաջին քայլերն են արել կինոյում, և այսօր կայացած մարդիկ են»:

Վարպետ օպերատորը հիշեց իր ասպարեզի մեծերին, որոնք չկան, հորդորեց՝ պետք է հիշել մեծերին, ապա երախտիքի խոսքն ուղղեց ներկաներին:

Ելույթ ունեցողները շնորհավորանքի և արժևորման ջերմ խոսքեր հղեցին անվանի օպերատորին:

«Ձեր կյանքի պատմությունը զուգահեռվում է հայ կինեմատոգրաֆիայի պատմությանը»,-ասաց ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը՝ ընդգծելով Լաերտ Պողոսյանի ստեղծագործական փորձառությունը, դասական դարձած մեծանուն ռեժիսորների հետ աշխատանքը և ունեցած մեծ դերը «Հայֆիլմ» կինոստուդիայի կայացման գործում:

Վարպետին մեծ վաստակի համար Արա Խզմալյանը հանձնեց ԿԳՄՍ նախարարության «Ոսկե մեդալ», ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի կինոօպերատորության և լուսանարչության ամբիոնի վարիչ Ռուբեն Երզնկյանը՝ ՀՊՄՀ Գիտա-կան խորհրդի անունից «Մանկավարժական համալսարան» մեդալ, Հարություն Խաչատրյանը՝ Հայաստանի կինոմիության գլխավոր մրցանակ՝ «Մշակութային ասպետ» շքանշան, Հայկական կինոյի օպերատորական վաստակի և ստեղծագործական գործունեության համար մրցանակ և հուշանվեր հանձնեցին Հայաստանի կինոօպերատորների միության նախագահ Վահագն Տեր-Հակոբյանը և Հանրային հեռուստատեսության հաղորդավար Կարեն Քոչարյանը:

Վերջում ներկաները դիտեցին Լաերտ Պողոսյանի մասին Լոս Անջելոսում նկարահանված ֆիլմից հատվածներ:

«Անցած օրերի մտորումներ. էսքիզներ» հուշերի գրքում կինոօպերատորն ամփոփել է իր կյանքի հիշարժան իրադարձությունները, որոնք առավել ամբողջական կդարձնեն ստացած պարգևները. դրանք վարպետի օպերատորական դպրոցի, պատրաստած մասնագետ կադրերի, ապրած հարուստ ու սերունդներին հարստացնող տարիների խոսուն վկայագրերն են:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հիշելու հրամայականը

Մանկավարժական ինստիտուտի երկրորդ կուրսում էինք: Հանրապետական թերթերում ես երբեմն հոդվածներ էի գրում, ու այդ մասին գիտեր մանկական գրականության դասախոս Սոֆիկ Լալախանյանը, ով, դարձյալ երբեմն, գովում էր իմ գրածները: Այդ տարի լույս տեսավ Խաժակ Գյուլնազարյանի «Օրերի ճանապարհը» գիրքը: Եվ ահա տիկին Լալախանյանը որոշեց կուրսի հետ հանդիպման հրավիրել գրողին ու… ինձ մեկնեց «Օրերի ճանապարհը» գիրքն ու ասաց.

- Արի մենք գրականագետներից, քննադատներից առաջ ընկնենք՝ դու ուշադիր կարդա այս եռագրությունը և զեկուցման տեքստ պատրաստիր. առաջիկա հանդիպմանը ինքդ էլ կներայացնես:

Ես և՛ ուրախացա վստահության համար, և՛ մի տեսակ, տագնապեցի. Գյուլնազարյանն արդեն հայտնի գրող էր, իմ կյանքում էլ առաջին դեպքն էր, որ պիտի գիրք գրախոսեի:

Լալախանյանը մի զգուշացում արեց.

- Չփորձես նախապես կարդալ որևէ գրախոսական կամ կարծիք Գյուլնազարյանի մասին՝ քեզ կխանգարեն դրանք: Այս գիրքը կարդա ուշադիր, գրիր այն, ինչ զգում ես, ինչպես հասկանում ես:

Ներկարացնեմ: Եկավ գրողը, մեծ լսարանում կուրսեցիներից բացի նաև դասախոսներ կային: Ինձ ամբիոնի մոտ հրավիրող Լալախանյանի խրախուսական ժպիտն ինձ ոգևորեց, և ես ընթերցեցի մեքենագիր 11 էջանոց իմ զեկուցումը: Ծափահարություններ, և Գյուլնազարյանի խոսքը (չմտածեք, թե մեծամտանում եմ, նա տառացիորեն հենց այդպես էլ ասաց).

- Իմ գրքերը հայտնի գրականագետների կողմից գրախոսվելու առիթներ շատ են եղել, շատ գրախոսողներ եմ ունեցել, ինձ՝ որպես գրողի, բնութագրումներ էլ շատ են եղել, բայց խոստովանեմ՝ այսքան անմիջական, այսքան անկեղծ խոսք և այսքան դիպուկ բնութագրում, գրքիս էությունն այսպես ճշմարիտ ներկայացնող խոսք առաջին անգամ եմ լսում: Ես շատ հուզված եմ և շատ զգացված:

Եվ հուզված գրողը համբուրեց ամբիոնի մոտ կանգնած, գրողից տասնապատիկ հուզված զեկուցողիս: Աշխարհն ինձ էին տվել-առաջին լուրջ քայլ, ջերմ գովեստներ: Ո՞նց եմ ափսոսում, որ մեքենագիր այդ առաջին գրախոսականս չի պահպանվել:

…Հիմա Խաժակ Գյուլնազարյանն արդեն 100 տարեկանի սահմանն անցել է, և Երկնային հեռուներից, գուցե թե, նրա հոգին զգում է իմ այսօրվա զգացումը, տեսնում է այս վերհուշից եկած իմ շիկնելը, իմ այսօրվա ջերմությունն իր հանդեպ, որ բարի հիշողություն է, գեղեցիկ տպավորությունների արտահատում: Գուցե տեսավ նաև, որ ես նույն հուզմունքով իմ խոսքն ասացի իր ծննդյան 100-ամյակին, որ կազմակերպվել էր Ավ. Իսահակյանի անվան գրադարանի մասնաճյուղ՝ Խաժակ Գյուլնազարյանի անվան գրադարանում: Ես այնտեղ մի քիչ ավելի մանրամասնեցի գրողի հանդեպ ունեցած իմ վերաբերմունքը, իմ խորին սերն ու հարգանքը, նաև հպարտությունս, որ հետագայում նա ինձ ընդունում էր որպես իր մտերիմ: Այդ մտերմության արդյունքում էր, որ ես մի քիչ երես էի առել և մի օր գրողների տանը բռնացրի գրողին ու նրան դեմ արեցի հարցերի իմ ծոցատետրը:

- Ես սա թողնեմ Ձեզ, պատասխանեք խնդրեմ եւ ասացեք, թե ե՞րբ գամ վերցնելու:

- Հիմա չի՞ կարելի,- ժպտաց, գրիչ ուզեց և հարցերի արանքում թողած ազատ տողերը լրացրեց իր գեղեցիկ ձեռագրով:

…Խաժակ Գյուլնազարյանի հետ մեր մտերմությունը հետո երկար շարունակվեց, և իմ Խաժակ որդու անունն էլ մեր այդ մտերմության արդյունքն էր: Այնտեղ, տեսնես, հանդիպե՞լ են իրար, զրուցելու բան հաստատ կունենան…

Հ. Գ. Հիշյալ գրադարանի տնօրենուհին իր բացման խոսքում ափսոսանք հայտնեց, որ այսօր Խաժակ Գյուլնազարյան գրողն այնքան էլ լավ ծանոթ չէ նոր սերնդի ընթերցողին: Հանդիսությանը ներկա Լյուդվիգ Կարապետյանը բավականին հաճախ է անդրադարձել գրողի կյանքին, և ես էլ մի քիչ ամաչեցի, որ, այն զեկուցումից հետո, ուրիշ ոչ մի արժեքավոր բան չեմ գրել Գյուլնազարյանի մասին: Այդտեղ ներկաներին, նաև իր որդի Արմենին, նաև այնտեղ՝ Երկնքում «մեզ նայող» Գյուլնազարյանին ես խոստացա, որ Վազգեն Վեհափառին, Հովհաննես Շիրազին, Համո Սահյանին, Ֆրունզիկ Մկրտչյանին, Օհան Դուրյանին, Ֆելիքս Պետրոսյանին և այլոց նվիրված իմ գրքերի շարքը պիտի լրացնեմ իմ բարեկամ, իմ սիրելի գրող Գյուլնազարյանին նվիրված գրքով:

Աստված բարեհաճ կգտնվի, երևի, իմ նկատմամբ, որ ա՛յս էլ հասցնեմ:

Հովհաննես ՊԱՊԻԿՅԱՆ
ՀՊՄՀ շրջանավարտ

Եվ եթե սերը անուն ունենար՝ ես նրան կկոչեի Արեն...

Հովի. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի դահլիճում Մանկավարժական համալսարանի ռեժիսուրայի ամբիոնի պրոֆեսոր Աիդա Հովհաննիսյանը ներկայացրեց «Ինձ հետ կանչեք, և ես կգամ» ներկայացումը: Խորհրդանշական էր, որ այն ներկայացվեց սեպտեմբերի 26-ին՝ 2020 թվականին Հայաստանի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի նախօրեին:

«Այն, ինչ այսօր բեմի վրա կտեսնեք, մեր բոլորի ցավն է, ձեր ցավն է, իմ ցավն է…Այն տղաները, որոնք 44-օրյա պատերազմում հերոսացան, բոլորը մերն են: Այսօրվա բեմադրությունը նվիրված է հերոս Արեն Հովհաննիսյանին: Պիեսի հիմքում դրել եմ Արենի որոշ մտքեր. որոնք այդ երիտասարդը չհասցրեց իրականացնել»,-ասաց Աիդա Հովհաննիսյանը:

Ստեղծագործությունը ծնվել էր Պատանեկան ստեղծագործության կենտրոնի, «Աիդա արտ» թատերական ստուդիայի և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի աջակցությամբ: Բեմադրիչ Աիդա Հովհաննիսյանը խոստովանեց՝ դժվար գործ էր, որովհետև ներկայացումը մեր ողբի մասին է: Դժվար էր երիտասարդների կերպարները ներկայացնող յուրաքանչյուրի համար: Ներկայացման մեջ միայն Արենը չէ. դա պատմություն է Աշոտների, Տիգրանների, Արամների, Արթուրների և մյուս բոլոր տղաների մասին:

«Եվ եթե սերը անուն ունենար՝ ես նրան կկոչեի Արեն»:

Ներկայացման մեջ պատերազմ չկար. այն երիտասարդների հոգիներում էր ու մտքերում. ավելին՝ գլխավոր հերոս Արենին մարմնավորող Գոռը հայրենասիրության ու հայրենակարոտության վառ օրինակ էր բեմի վրա՝ իր կեցվածքով, խոսքով, մտածելակերպով…Նա մարմնավորում էր բոլոր այն տղաներին, որոնք նահատակվեցին 44-օրյա պատերազմի օրերին՝ տալով ամենաթանկը՝ իրենց կյանքը:

Դերասանները երկար ժամանակ լարված պահեցին դահլիճը, ուր գտնվում էին նաև Արեն Հովհաննիսյանի ծնողները, հերոսածին մայրեր:

Բեմը բացվեց դպրոցական «Վերջին զանգի» պատկերով՝ պատանեկական աշխույժ միջավայրում յուրաքանչյուր դպրոցական իր կերպարի մեջ այնքան բնական էր ու գեղեցիկ: Նրանք խոսում էին բուհ ընդունվելու, ընտանիք կազմելու, հայրենիքի համար պիտանի մարդ դառնալու իրենց երազանքների մասին, ու բոլորից սեր էր հորդում, որ շրջապատը ինքնին լցնում էր անսահման լույսով…

Արենի հերոսը նույնպես երազանքներ ուներ՝ սիրած աղջկա հետ ընտանիք կազմել, կառուցել մեծ ու լուսավոր տուն, շատ զավակներ ունենալ… Սիրահար պատանիների երազանքները մնացին անկատար. պատերազմը փոխեց կյանքի ընթացքը, խլեց սիրելիներին՝ թողնելով ցավ ու տառապանք:

Ռեժիսորի բեմադրական լուծումները հետաքրքիր էին՝ համահունչ հայ ժողովրդին հասած պատուհասի ծանրությանը, որը, սակայն, ներկայացվեց նաև երաժշտական նուրբ մոտեցմամբ ու պարի լեզվով:

Ներկայացման ընթացքում Աիդա Հովհաննիսյանը կիրառել էր խորհրդաշական սև ու սպիտակ կտորներ, զինվորական շապիկներ, իսկ ներկայացման վերջում բեմ բարձրացավ հերոսի մայրը, որ շոյի տղայի սիրած աղջկա գլուխը… Հուզիչ տեսարանները փոխարինում էին իրար՝ մի կողմից՝ պատերազմի տխուր կոլորիտի մեջ առնելով ներկաներին, մյուս կողմից՝ ամրացնելով հոգիները՝ չպետք է հանձնվել, պետք է դիմակայել ցավին ու նորից շենացնել հող հայրենին…

Ռեժիսորի ամփոփիչ ելույթը կրկնություն չէր, այլ ներկայացվածի իմաստավորում՝ եթե սերը անուն ունենար՝ ես նրան կկոչեի Արեն…

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի գիտություն դիմորդների՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն երկարաձգում է

2022/2023 ուսումնական տարվա հայցորդական /հետբուհական/ կրթության ընդունելությունը (վճարովի հիմունքներով)

Հայցորդական /հետբուհական/ կրթության ընդունելության մրցույթին կարող են մասնակցել պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտներ, ովքեր ունեն մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Դ իմում համալսարանի ռեկտորին՝ նշելով ընտրած մասնագիտությունը:

2. Մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):

3. Անձնագրի և սոցիալական քարտի պատճենները:

3. 2 տպագրված հոդված կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ:

4. 3 լուսանկար (3x4 չափի):

5. Ինքնակենսագրություն (CV):

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև **նոյեմբերի 01-ը /ներառյալ/**:

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 2-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն՝ 206 սենյակ, հեռ՝. 59-70-29:

Խոսք՝ առանց վերջակետերի

Սիրելի ուսանողներ,

Այսօր մենք պարտադրված հրաժեշտ տվեցինք մեր ընկերոջը, համակուրսեցուն, աշակերտին…-միաժամանակ պայծառ աչքերով ու պատանեկան ժպիտով, երազանքներով լեցուն երիտասարդին, հայ զինվորին…

Ընդհանրապես ընդունված է, երբ աշակերտը, սանն է անցյալ ժամանակով գրում ուսուցչի մասին…դա կարծես կյանքի փիլիսոփայության, տրամաբանական ընթացքի կամ դրամայի կառուցվածքի և կանոնների շրջանակում է: Հակառակն արդեն ողբերգության կանոններում է, երբ հաղթանակում է անարդարությունը, սուտն ու կեղծիքը, երբ ճշմարտությունն անզոր է որևէ բան փոխել, երբ կորուստն անդառնալի է, ու ցավն ամենուրեք…

Դասընթացների ընթացքում բազմիցս ենք խոսել ու գրել Հայրենիքի մեր ընկալումների ու պատկերացումների մասին: Փորձել ենք սահմանել, բնութագրել կամ վերլուծել Հայրենիքի նյութական ու հոգևոր շերտերն ու եզրերը: Հասկանալ ու զգալ այն անբացատրելի ձգողական ուժը, որն ունի այս հողը, մեր հողը, հայրենի հողը: Այն այսօր ավելի ուժեղացավ մի լուսե երիտասարդի չկատարված երազանքներով ու մինչև վերջ չհնչած սիրո խոստովանությամբ…

Կրթության գործընթացը բաժանվում է ուսումնական տարիների, սակայն, ցավով եմ փաստում, որ մեր կուրսի համար այն բաժանվեց Վոլոդյայի հետ ու նրանից հետո: Ես միշտ ձգտում էի, որպեսզի դուք մի փոքր արագ հասունանաք, բայց նման ձևով ու այդ գնով հասունացումը ոչ մեկիս պետք չէր…

Հիմա բոլորդ խոսում եք, հիշում, գրում, արտահայտվում, տարածում…

Իսկ ես առաջարկում եմ լուռ լսել…

Հայաստանով մեկ սփռված Սուրբ Եռաբլուրի եռագույնների փողփողացող բազմաձայն պատարագին ևս մեկ ձայն է ավելացել…Վոլոդյայի ձայնը…

Արթուր ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 6.10.2022 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ